

ՀԻՆ ԷՋԵՐ

ԿԵԴՐՈՆԱԿԱՆԻ ՇՐՋԱՆԱՎԱՐՏ ՄԸ

Հինգշաբթի, մենարանիս մեջ առանձին, բառարանի փորձ կնայեի, և դեպի խուցս՝ վարի պարտիզի ճամբեն՝ թեթևոտն քայլափոխից ձայն մը նշմարեց ականջս: Ճանչցա Հրաչյային գաղտնապահ քայլվածքն: Աճառյան յուր վաղեմի դասատուն եկավ տեսնել միշտ նույն երկչոտ կամ երկյուղած քայլվածքով, զի մի՛ գուցե խռովե նորա մենատան ու մենահոգվույն խորհրդազգած լռությունն: Եկավ մերթ՝ զի՛ս տեսնել, մերթ՝ փոխ տված գրքերս ինձ վերադարձնել, և մերթ՝ հարցասիրել հայերեն մայր բառարանն (Ստուգաբանական բառարանի մը համար՝ որուն ձեռնարկած էր), որուն պետք ունենալով միշտ ֆրանսահայ բառագրքիս համար՝ զոր կհորինեի՝ չէի կրնար հեռու տեղ փոխ տալ զայն:

Հինգշաբթի մեծ ծրարով մը բեռնավորյալ եկավ Հրաչյան:— Երբ՝ Գատրգյուղն առհավետ թողլու վերջնական որոշումս հայտնելուս վրա՝ «Ծերմակ աղջիկն» իր քով ունեցած գրքերուս ծրարն ինձ հղեց, անհուն անբացատրելի եղավ տրտմությունը՝ որպես թե դագաղս ըլլար, որ ինձ կը-ղրկվեր:— Հինգշաբթի ավուր հուզումս տարբեր էր անշուշտ, սաև մըն էր, բարեկամ մրն էր, որ պիտի հեռանար մայրաքաղաքես, անընդմիջական խանդաղատանքես: Որովհետև համեստ ու ծանրաբարո պատանի մ'էր Հրաչյա՝ նվիրյալ ուսման, որովհետև իմ աշակերտացս մեջեն՝ Սարգիս Մինասյանին հետ՝ ամենեն ավելի գիս փնտրեց իմ հոգեկան լքման օրերուս մեջ. պարզորեն խոսելով՝ շա՜տ տրտմեցա, երբ ծրարը ձեռքը ներս մտավ մենարանես:

Հրաչյա Աճառյան Ազգային Կեդրոնական վարժարանին անցյալ (1893) ամի շրջանավարտներեն է. և Սանասարյան դպրոցին գրաբար և աշխարհաբար լեզվաց ուսուցիչ կարգված է, որպես ծանուցվեցավ կրթատու վարժարանին վկայականեն զատ, հազիվ շրջանավարտ՝ բարձրագույն կրթական հաստատության մը մեջ այնքան կարևոր ճյուղի մը դասախոսության համար ստացած հրավերն՝ Հրաչյա Աճառյանի կարողության վրա բավականեն ավելի կխոսի:

Բայց իր մտաց մշակության վրա ամենեն ճշգրիտ գաղափարը չպիտի տար միմիայն ցանկը ա՛յն գրյանց, զորս հինգշաբթի վերադարձուց ինձ Աճառյան, նվիրական մատյաններ՝ իր թափած աչքի լուսով —կրնա ըսվիլ—կրկին նվիրականացյալ: Ավասիկ իմ նախկին սանիս կարդացած գրքերը.— «Հնդկաստանի գրական դարաշրջանը» Ֆ. Նևի, «Հիշատակարանք արևելագիտաց համազգային վեհաժողովույն», Էմիլ Պյուռնուֆի «Սանսկրիտ քերականություն», Սալոմոն Ռընյնաքի «Դասական բանասիրություն» ըստ նորագույն լեզվաբանական աշխատության: Սուրբ գիրքերս— որպես Հոմերոսս, մարդո՛ւ չէի տված ցարդ. խելքի տկարություն կամ սրտի զորություն

համարվի՛, այդ կրկնակի թանկագին գրքերուս պատճառով ա՛լ արտագիշերել չեմ ուզեր՝ որպես դուն ուրեք ըրած եմ ի սկզբանե անտի: Սիրահոժար՝ սակայն՝ զանոնք գրքատունես հանելու զոհողությունն հանձն առի—որպես և Ռիկ-Վետան ալ տրված էի հառաջագույն —որովհետև՝ իբրև գլուխ և իբրև սիրտ՝ մեծ ապագա կգուշակեի Կեդրոնականին այդ կոչեցյալ աշակերտին համար:

Աչքս արտասվաթոր հետևեցա՛վ իրեն հինգշաբթի, դեռ կհետևի ու պիտի հետևի մինչև որ «տեղիկն հասնի», որպես պիտի ըսեր իր բարի մայրիկն՝ ընտանեկան խանդ՝ղատական մանրաբարբառ ա՛յն լեզվով՝ որով կխոսին, կարտախոսեն մայրերն: Ա-ռողջությունն է միայն Հրաչյային մաղթածս. ուրիշ ամեն բան ունի հառաջանալու, մեծանալու համար: Բարձր հողի վրա ու բարձրը հովանիի ներքև եղող այդ Սանասարյան հարկին մեջ՝ իր ուսուցչական և առանձին բանասիրական աշխատություններեն դուրս՝ նորեն թռիչ առնու թերևս Հրաչյային երևակայությունն, և մեզ ինքնատիպ քերթվածներ հղե կարդալու,—քանզի բանաստեղծ ալ է Անառյան: Իրմեն 8—10 ոտանավորներ միայն արբագրած եմ Կեդրոնական վարժարանին մեջ, այնուհետև անստգյուտ բանաստեղծություններ արտադրեց, որպես վիպակ և ուսումնասիրություններ:

Եվ՝ հակառակ առածին՝ խոսքին տեղ գի՞րն է, որ պիտի թռչի ու գա մեզի:

ԵՂԻԱ (ՏԵՄԻՐՃԻՊԱՇՅԱՆ)

(«Ծաղիկ», 20 օգոստոս, 1894, շաբաթ)